Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

-460-

# ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

## ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿՈՈՊ — ՖԻՆՍԵԿՏՈՐ

1932 ԵՐԵՎԱՆ

14 SEP 2017

# ԱՅԿՈՈՊԻ ՍԻՍՏԵՄԱՅԻ ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐ-ՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՍԽՀՄ Ժողկոմխորհի ս. թ. 16/II № 164 վորոշ-
մը սպառողական կոոպերացիային թույլ և տրված
ցանցում գոյություն ունեցող կազմակերպություն-
րի շրջանառու միջոցները լրացնելու և նոր առա-
ցող կազմակերպությունների շրջանառու միջոցներ
եղծելու համար կազմակերպել «հատուկ կարգավոր-
ն ֆոնդ», վորին հատկացումներ պիտի կատարվեն
առկոոպերացիայի ամբողջ սիստեմայի կուտակում-
րից։

ԽՍՀՄ Ժողկոմխորհի ս. թ. 16/II № 165 վորոշ-
մը սպառկոոպերացիայի վրա դրված խնդիրների
տարումը կապիտալ շինարարության, կուլտուրա-
ն կարիքների և այլի համար միջոցների մոբիլիզա-
այի գործում ապահովելու նպատակով, պարտադիր
[illegible] կողմից տրված կարգադրություն-
ային ֆոնդերին մուծումներ կատարելու մասին.
[illegible] վորոշումները հնարավորու-
թյուն են տալիս գործադրության մեջ դնել հատուկ

[illegible] 911 2 Պատվեր 3246 Տիրաժ [illegible]

կարգ սպառկոոպերացիայի միջոցների վերաբաշխման համար նրա ֆինանսական դրությունը կայունացնելու նպատակով։ Դրա հետ միասին անհրաժեշտ է, որպեսզի վերադաս օղակների կարգադրությամբ կատարվելիք հատկացումները ոչ մի կերպ չխախտեն տնտհաշվարկը սպառկոոպերացիայի կազմակերպություններում, որի համար ԺԿԽ-ի որոշումը սահմանում է հետևյալ հիմնական սկզբունքները՝ — 1) պարտադիր են միայն մուծումները (հատկացումները) ներսիստեմային դրամագլուխներին և ֆոնդերին. 2) մուծումների չափը որոշվում են սպառկոոպերացիայի պլաններով։

Այդ բոլորը կյանքում անշեղ կիրառելու նպատակով վերացվում է հատկացումների նախկին ձևը և ուժի մեջ է մտնում վճարման կարգադրությունների — հրամանների հատուկ ձևը, որի գործադրման մանրամասնությունները տրվում են սույն գրքույկում համապատասխան հրահանգներով՝ կարգավորման, կապիտալ շինարարության և կուլտ ֆոնդերի մասին։

Անհրաժեշտ է որ մեր կազմակերպությունները անշեղորեն կիրառեն հրահանգներում թված բոլոր մոմենտները և հատկացումները կատարեն ժամանակին, դրանով հնարավորություն տալով վերադաս օղակներին նույնպես ժամանակին գործադրել այդ ֆոնդերը ըստ իրենց նպատակների։

«Հրահանգները» հանդիսանում են Ցենտրոսոյուզի հրահանգների թարգմանությունը որոշ կրճատում-

1-2835գր



ներով համապատասխան մեր սիստեմայի պայմաններին։

Հայկոոպի Վարչության Նախագահ՝ Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ֆին-Սեկտորի վարիչ՝ Խ. ՔԱՐՀԱՆՅԱՆ

Կոնսուլտանտ՝ Վ. ԽԱՉԻԿՅԱՆՑ

## ՔԱՂՎԱԾՔ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 16/II 1932 թ. №164 վորոշման № 3 արձանագրությունից

### ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՖՈՆԴԻ ՄԱՍԻՆ

*Գտնելով անհրաժեշտ ամրացնել տնտհաշվարկը սպառկոոպերացիայի սիստեմայում և ապահովել ապրանքաշրջանառության ֆինանսավորումը սպառկոոպերացիայի իր սեփական շրջանառու միջոցներին անցկացնելու կարգով, ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝*

*1) Գոյություն ունեցող կազմակերպությունների շրջանառու միջոցները լրացնելու և նոր առաջացող կոոպկազմակերպությունների շրջանառու միջոցներ ստեղծելու համար, սպառկոոպերացիայի ամբողջ սիստեմայի կուտակումներից սահմանել միջոցների պարբերական վերցնումը կարգավորման հատուկ ֆոնդին, վորը գտնվում է Ցենտրոսոյուզի տրամադրության տակ։*

*2) Կոոպկազմակերպությունների մուծումները կարգավորման ֆոնդին պարտադիր են և վորոշվում*

են Ցենտրոսոյուզի կողմից վորոշ տոկոսով նրանց ավանդների և փայերի կուտակումներից։ Այդ տոկոսը դիֆֆերենցիացիայի չի յենթարկվում ըստ սիստեմայի առանձին օղակների այն հաշվով, վորպեսզի ավանդներից և փայակուտակումներից կատարվող մուծումների ընդհանուր գումարը չ'գերազանցի այդ հողվածների յեկամուտի 80%-ը։

Ծանոթություն.—*Միջոցների վերցնումների վերահաշվարկը համեմատությամբ փաստացի կուտակումների հետ, կատարվում է տարեկան յերկու անգամ ըստ համապատասխան կոոպկազմակերպությունների բալանսի։*

3) Մուծումները կարգավորման ֆոնդին — անժամկետային են։

4) Ֆոնդի միջոցների բաշխումը առանձին կոոպկազմակերպությունների մեջ, վորոնց համար գտնված է անհրաժեշտ լրացնել նրանց սեփական շրջանառու միջոցները կամ շրջանառու միջոցներ տալը, կատարվում է Ցենտրոսոյուզի կողմից նրա ավտոնոմ սեկցիաների և գյուղային միավորումների միջոցով, ինչպես և սպառկոոպերացիայի հանրապետական, յերկրային և մարզային միությունների միջոցով։

5) Կարգավորման ֆոնդից միջոցներ տրվում են վերադարձվող փոխատվության ձևով 5 ամսից վոչ պակաս ժամկետով։

6) Կարգավորման ֆոնդի մուծումները և նրանից կատարվող վճարումները, ինչպես և մուծումները ըստ ժամկետային պարտավորագրերի կատարվում են Ցենտրոսոյուզի և սպառկոոպերացիայի համապատասխան կազմակերպությունների հանձնարարությամբ Պետբանկի միջոցով և հաշվառվում հատուկ հաշիվներում։



7) Սույն վորոշման գործադրման հրահանգը հրատարակվում է Ցենտրոսոյուզի կողմից համաձայնեցրած Պետբանկի հետ։

ԽՍՀՄ Ժողկոմխորհի Նախագահ՝ ՄՈԼՈՏՈՎ

(ՍԿՐՅԱԲԻՆ)

# ՀՐԱՀԱՆԳ

Սպառողական կոոպերացիայի շրջանառու միջոցների կարգավորման ֆոնդին վերաբերվող ԽՍՀՄ Ժողկոմխորհի 16/II—1932 № 164 կիրառման մասին.

---

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

*1/1. Սպառողական կոոպերացիայի շրջանառու միջոցների կարգավորման ֆոնդը կենտրոնացված ֆոնդ է, որը գտնվում է Ցենտրոսոյուզի տրամադրության տակ։*

*2/2. Ֆոնդի միջոցները պահվում են Պետբանկում Ցենտրոսոյուզի Պրեզիդիումի կենտրոնական հաշվում։ Ֆոնդի մուծումները գանձելու համար Ցենտրոսոյուզի Պրեզիդիումի կողմից բացվում են ընթացահաշիվներ Պետբանկի շրջանային, Հանրապետական, Երկրային և Մարզային բաժանմունքներում։*

## II. ՖՈՆԴԻ ԿԱԶՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

*3/3. Ֆոնդը կազմվում է սպառկոոպերացիայի սիստեմայի բոլոր կազմակերպությունների ավանդների մուծումներից։ Մուծումների չափը առանձին շրջանների և սպառկոոպերացիայի սիստեմայի համար*

վորոշվում ե Ցենտրոսոյուզի Պրեզիդիումի կողմից պլանային ոգուտների և փայադրամագլխի պլանային կուտակումից առանձին տոկոսային հատկացման ձևով և հետագայում հաշվարկի չե յենթարկվում, յելնելով փաստացի կուտակումից (տես հոդ. 18—ա)։

Ծանոթություն — Հանրապետական, մարզային, ազգային և շրջանային միությունների և ավտոնոմ սեկցիաների Պրեզիդիումները կարող են դիֆֆերենցիացիայի յենթարկել մուծումները չափը ըստ առանձին հիմնարկների վերադաս հիմնարկների կողմից տրված ընդհանուր առաջադրությունների սահմաններում, անպայման ղեկավարվելով ԽՍՀՄ ժողկոմխորհի 16/II 1932 թ. № 164 վորոշման 2-րդ կետով։

4/4. Մուծումները կարգավորման ֆոնդին անժամկետային են և անտոկոս։ Մուծումների վերադարձը կատարվում ե Ցենտրոսոյուզի Պրեզիդիումի հատուկ վորոշմամբ։

5/5. Սպառկոոպերացիայի ամեն մի ստորադաս կազմակերպություն (գյուղկոոպ, փակռաբկոոպ, անտառկոոպ և այլն) իրենից հասանելիք ավանդը մուծում ե Ցենտրոսոյուզի կարգավորման ֆոնդի յենթահաշվին Պետբանկի այն բաժանմունքում, վորը գտընվում ե իր վերադաս հիմնարկի գտնված վայրում։

6/6. Սպառկոոպերացիայի միութենական կազմակերպությունները (շրջսպառկոոպմիություններ, յերկրային միություններ և այլն), յերկրային ճյուղային միավորումները իրենցից հասանելիք ավանդները մուծում են անմիջականորեն Պետբանկի իրենց բաժանմունքը Ցենտրոսոյուզի կարգավորման ֆոնդի յենթահաշվին։

7/7. Համամիութենական ճյուղային միավորումները իրենց և իրենց բոլոր տնտեսությունների (պահեստ, բաժանմունք և այլն) մուծումները մտցնում են կարգավորման ֆոնդի № 6275 կոնտոկորենտ հաշվին Պետբանկի Մոսկվայի գրասենյակում։



8/8. Պետբանկի շրջանային բաժանմունքները ամեն ամսի 1, 11 և 21-ին հեռագրով փոխադրում են Պետբանկի իրենց Յերկրային գրասենյակին կարգավորման ֆոնդի յենթահաշիվներին գրանցելու համար նախորդ դեկադայի ընթացքում մուտք յեղած ավանդները ամբողջ գումարով։ Միաժամանակ Պետբանկի շրջանային բաժանմունքը կարգավորման ֆոնդի յենթահաշվի քաղվածքը ուղարկում ե շրջսպառկոոպմիության։

Ծանոթություն.—1) Յեթե Պետբանկի մեկ շրջանային բաժանմունքը սպասարկում ե մի քանի շրջսպառկոոպմիության, նա բաց ե անում համապատասխան քանակությամբ Ցենտրոսոյուզի կարգավորման ֆոնդի յենթահաշիվներ, հաշվառելով ամեն մի կազմակերպության մուծումը առանձին-առանձին։

2) Կարգավորման ֆոնդի ավանդների ճիշտ հաշվառման նպատակով Պետբանկի բաժանմունքները յենթահաշիվներում գրանցումներ կատարելիս պետք ե մանրամասն ցույց տան ավանդատու կազմակերպության անվանումը և միության անվանումը։

9/10. Ամեն մի կոոպերատիվ կազմակերպություն կարգավորման ֆոնդին կատարած մուծումները ձևակերպում ե իր բալանսով և ցույց ե տալիս իր հաշվետվություններում համաձայն կարգավորման ֆոնդի մուծումների և փոխատվությունների հաշվառման հատուկ հրահանգի։

10/12. Առանձին ավանդատուների մուծումների հաշվառումը կատարում ե միությունն իր բալանսում համաձայն կարգավորման ֆոնդի մուծումների և փոխատվությունների հաշվառման հատուկ հրահանգի։

11/13. Ցենտրոսոյուզի Պրեզիդիումն ամեն մի կվարտալի համար ուղարկում ե Հանրապետական և մյուս միություններին, նաև միութենական ավտոնոմ սեկցիաներին և հացաթխման միության, միավորման

կարգավորման ֆոնդին կատարվելիք մուծումների պլան—հանձնարարությունը պատճեն ուղարկելով Պետբանկի համապատասխան բաժանմունքին։

Հիշված կազմակերպությունները պարտավոր են Ցենտրոսոյուզի պլան — հանձնարարությունը ստանալուց 5 օրվա ընթացքում՝

ա) ստացած հանձնարարությունը բաշխել իրենց սիստեմայի կազմակերպությունների վրա. բ) դուրս գրել 17 դ կետ. նշված վճարման կարգադրությունները անմիջականորեն նրանց յենթակա նախնական կազմակերպությունների (փակբանկոոպ, բանկոոպ) և միավորումների վրա (ամեն մեկ ժամկետի վճարումների համար առանձին կարգադրություններով). գ) դուրս գրել պլան — հանձնարարություններ շրջսպառկոոպմիությունների համար յերկու օրինակից և հանձնել Պետբանկի իր բաժանմունքին թված նյութերը (գումարների բաշխումը, վճարման կարգադրությունները յերկուական օրինակից և մեկական օրինակ շրջսպառկոոպմիությունների պլան—հանձնարարության, միաժամանակ ուղարկելով հանձնարարությունների յերկրորդ օրինակները անմիջականորեն շրջսպառկոոպմիություններին)։

Ց նտրոսոյուզի Պրեզիդիումի հանձնարարության այն մասի համար, վորը բաշխման ժամանակ ընկնելու է միության սեփական տնտեսության վրա, միութենական կազմակերպությունը միաժամանակ տալիս է Պետբանկի իր գրասենյակին անհետադարձ վճարման հրաման իր հաշվարկային հաշվի վրա։

Ցեթե վերև թված կազմակերպություններից մի վորևե մեկը 5 օրվա ընթացքում Պետբանկին չի ներ-



կոյացնի բաշխումը, կցելով բոլոր վճարման կարգա-
դրությունները, հրամանները և շրջսպառկոոպմիություն-
ներին տրված հանձնարարության— պլանները, Պետ-
բանկի բաժանմունքը դրա մասին հայտնում է Ցենտ-
րոսոյուզի ֆինսեկտորին հեռագրով։

Ցենտրոսոյուզի Պրեզիդիումը կարող է այդպիսի
դեպքում դուրս գրել վճարման կարգադրություն ան-
միջականորեն միութենական կազմակերպության հաշ-
վարկային հաշվի վրա, կարգավորման ֆոնդի մուծում-
ների համար տրված հանձնարարության միության
կողմից չբաշխված գումարով։

12|15. Պետբանկի գրասենյակները, համաձայն
սույն հրահանգի 13-դ կետի, շրջսպառկոոպմիություն-
ների անունով ստացած պլան—հանձնարարական-
ները ուղարկում են իրենց համապատասխան շրջան-
ների բաժանմունքներին։

Շրջսպառկոոպմիությունը, ստանալով միության
պլան— հանձնարարությունը պարտավոր է 3 օրվա
ընթացքում ներկայացնել Պետբանկի իր բաժանմուն-
քին՝ ա) ստացած հանձնարարության բաշխումը իր
ցանցի մեջ, մտցնելով նրա մեջ և այն գումարը, վորը
ընկնում է իր սեփական տնտեսության վրա, բ) վ-
ճարման կարգադրություն այն գյուղկոոպների վրա,
վորոնք Պետբանկում ունեն ընթացիկ կամ հաշվարկային
հաշիվներ և գ) անհետադարձ վճարման կարգադրություն
միության հանձնարարության այն մասի համար, վորը
շրջսպառկոոպմիության բաշխմամբ ընկնում է իր սեփա-
կան տնտեսության վրա, նաև այն գյուղկոոպների տնտե-
սության, վորոնք Պետբանկում ընթացիկ կամ հաշվար-
կային հաշիվ չունեն։ Ցերբ նշված ժամկետին թված

նյութերը լրիվ կամ մասնակի չեն ներկայացվի Պետբանկի շրջանային բաժանմունքին, վերջինը հեռագրով տեղեկացնում է վերադաս Ցերկրային Միության, որն իրավունք ունի դուրս գրել համապատասխան գումարի վճարման կարգադրություն անմիջականորեն Շրջսպառկոոպմիության հաշվարկային հաշվին։

13/17. 13 և 15 կետերում նշված վճարման կարգադրությունները, որոնք դուրս են գրվում վերադաս կոոպկազմակերպությունների կողմից, անվիճելի յեն և յենթակա են վճարման հետևյալ կերպ՝

ա) Վճարման կարգադրությունները դուրս են գրվում 3 օրինակից, որից մեկը ուղարկվում է վճարող կազմակերպության և յերկուսը Պետբանկի այն բաժանմունքին, որտեղ կազմակերպությունը ունի ընթացիկ կամ հաշվարկային հաշիվ։

բ) Այն դեպքում, յերբ կարգադրություններում, թված ժամկետում վճարումը չի կատարվում, Պետբանկի բաժանմունքն ինքնուրույն կերպով դուրս է գրում այդ գումարը վճարող կազմակերպության հաշվարկային կամ ընթացիկ հաշվից, համաձայն իր մոտ յեղած կարգադրության օրինակի։

գ) Նախորդ կետում ցույց տված ինքնուրույն կերպով գումարի դուրսգրումը կատարվում է հաշիվ—ֆակտուրաների հետ ընդհանուր հերթով։

Ծանոթություն.—Հաշիվ—ֆակտուրների և կարգավորման ֆոնդի մուծումների անելու համար վճարման կարգադրության միաժամանակ ստացման դեպքում առաջնությունը ըստ հերթականության տրվում է վերջինին.



դ) Այն դեպքում, յերբ վճարող կազմակերպության հաշվարկային կամ ընթացիկ հաշվում չի լինում անհրաժեշտ գումար կարգադրության լրիվ վճարման համար, Պ. Բանկի բաժանմունքները, ժամկետի օրին հաշվարկային (ընթացիկ) հաշվում ունեցած գումարը փոխանցում են կարգավորման ֆոնդի յենթահաշվին և հետագայում մինչև հաշվարկային (ընթացիկ) հաշվում այդ գումարը լրիվ կուտակվելը, այդ հաշվից կատարում են միայն օրենքով նախատեսված հետևյալ վճարումները աշխատավարձի համար. սոցապգանձարկղին, բյուջեին (յեկամտային հարկ և մյուս պարտադիր վճարումներ), շուտ փչացող մթերքների ոգտագործման համար և Պ Բանկի ժամկետանց վճարումների համար։ Յեթե 30 օրվա ընթացքում հաշվարկային (ընթացիկ) հաշվում չի հավաքվի անհրաժեշտ գումար վճարման կարգադրության լրիվ վճարելու համար, հավաքված գումարները Պ. Բանկը փոխանցում է կարգավորման ֆոնդի յենթահաշվին. Պ. Բանկի բաժանմունքը միաժամանակ հայտնում է վճարման կարգադրություն տվող կազմակերպության չհանգեցրած գումարի մնացորդի մասին։

Վերադաս կազմակերպությունը, ստանալով Պ. Բանկի ծանուցագիրը չվճարված գումարի մասին, կարող է անպարտաճանաչ վճարողի հանդեպ տալ լրացուցիչ վճարման կարգադրություն։

յե) Յեթե վճարման կարգադրությունը յերաշխավորված է վերադաս կոոպկազմակերպության կողմից և յեթե 30 օրվա ժամկետի ընթացքում այդ գումարը վճարողի կողմից լրիվ կերպով չի մուծվել Պ. Բանկի բաժանմունքը [illegible] գումարը դուրս է

դրամ չերաշխավորող վերադաս կազմակերպության հաշվարկային հաշվից վերև բերված ձևով։

14/18․ Կարգավորման ֆոնդի մուծումների վերահաշվարկը համեմատությամբ փաստացի փայակուտակման հետ (տես 3 կետ) կատարվում է ըստ բալանսային և հաշվետու տվյալների տարվա ընթացքում յերկու անգամ՝ նախնականը—ըստ 1/VII դրության և վերջնականը—ըստ 1/I դրության (հաստատված տարվա հաշվետվություններով)։

Ավել ստացված գումարների վերադարձը կամ—մուծված գումարի լրացուցիչ ստանալը կատարվում է երեք ամսվա ընթացքում կազմակերպության կողմից բալանսներ և հաշվետվություններ ներկայացնելուց հետո։

Ծանոթություն․—1933 թվին հաշվարկ ըստ 1/VII դրության չի կատարվելու.

15/19.-Ցենտրոսոյուզի ռայպոտկոոպերացիայի շրջանառու միջոցների կարգավորման ֆոնդի» հաշիվ № 6275 և տեղերում բացված բոլոր լենթահաշիվները Գ. Բանկի հաշվեկշռում պահվում են առանձին։

## III ՖՈՆԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ. ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

16/20 Ֆոնդի միջոցները ոգտագործվում են գոյություն ունեցող կազմակերպությունների շրջանառու միջոցները լրացնելու և նոր առաջացող կազմա-



կերպությունների շրջանառու միջոցներ ստեղծելու համար և տրվում են վերադարձ փոխատվության ձևով 5 ամսից վոչ պակաս ժամկետով։

17/21) Կոոպերատիվ կազմակերպությունները վորոնք իրենց շրջանառու միջոցները լրացնելու կարիք են զգում, ուղարկում են իրենց վերադաս միութենական կազմակերպության համապատասխան դիմում, ներկայացնելով իրենց յեռամսյակային ֆինպլանը։ Այդ նյութերին պետք կցված լինեն վերջին ընթացիկ հաշվեկշիռը, կազմված Ցենտրոսոյուզի հաշվառման և հաշվետվության սեկտորի կողմից նշանակված ժամկետին և վերադաս կազմակերպության կողմից հաստատված տարեկան կոնտրոլ թվերը։

Դիմումի մեջ բացի պահանջվող ընդհանուր գումարից, պետք է լինեն հիմնավորված առանձին փոխատվությունների ստանալու անհրաժեշտ ժամկետները և նրանց մարման հնարավոր ժամկետները։

18/22) Առանձին կազմակերպությունների դիմումները ստուգվում են և հավաք կերպով ուղղվում են վերադաս ողակին։

Ցենտրոսոյուզի պրեզիդիումին դիմումները ներկայացնում են հանրապետական, յերկրային, մարզային և ազգային միությունները համամիութենական սեկցիաները, միաժամանակ ներկայացնելով իրենց ցանցի համար պահանջվելիք փոխատվությունների կվարտալային ֆինպլանները ամփոփ ձևով։

Այդ ամփոփումները հանդիսանում են իբրև լրացուցիչ նյութեր դիմումներին կից և ծառայում են միութենական կազմակերպություններին և տվյալ սեկցիաներին որպեսզի անհրաժեշտ փոխատվության ընդ-

հանուր չափը վորոշելու համար, վորը պետք է նրանց կողմից ինքնուրույն կերպով, իրենց պատասխանատվությամբ, տրվի ստորադաս կազմակերպությունների շրջանառու միջոցների կարիքները բավարարելու համար, վորպես փոխատվություն, սույն հրահանգի 31-դ կետում նշված կարգով։

Ծանոթություն—Ինչպես Ցենտրոսոյուզի Պրեզիդիումի, նույնպես և միությանական կազմակերպությունների կողմից, համաձայն սույն հրահանգի 34-դ կետի փոխատվություն տալու դեպքում, քննվում են դիմումները միայն այն կազմակերպությունների, վորոնք նախորդ կիսամյակի ընթացքում ճշտապահ կերպով կատարել են իրենց պարտավորությունները կարգավորման ֆոնդին գումարները ժամկետին մուծելու նկատմամբ։

19|24) Միջնորդությունները քննելուց և հաստատելուց հետո, Ցենտրոսոյուզը կազմում է ֆոնդի միջոցների բաշխման [illegible] կիսամյակի պլանը և հայտնում է նրանց (կազմակերպություններին) տրվելիք փոխատվության գումարների և ժամկետների մասին։

20|25) Պլանի հաշվին փոխատվությունները տրվում են Ցենտրոսոյուզի կողմից 22-դ կետ. թված այն կազմակերպություններին, նաև համամիութենական ճյուղային միավորումներին, համաձայն այդ կազմակերպությունների ցանցի կողմից կատարված մուծումների Ցենտրոսոյուզի № 6275 հաշվին Պ. Բանկի Մոսկվայի գրասենյակում և այն ժամկետով, վորը բղխում է համապատասխան մուտքերի պլանից։

21|26) Փոխատվությունները տրվում են Պ. Բանկի կողմից կարգ. ֆոնդի միջոցների հաշվին, վորոնք



գտնվում են Ցենտրոսոյուզի № 6275 հաշվում Պ. Բանկի Մոսկվայի գրասենյակում, հետևյալ կարգով՝

Փոխատվությունների տալու կարգադրությունը տալիս է Ցենտրոսոյուզը Պ. Բանկի Մոսկվայի գրասենյակին, կցելով կարգադրությանը պարտավորագրերի լրացրած բլանկների յերկու օրինակ, վորոնք պետք է ստորագրվեն փոխ առնողի կողմից. պարտավորագրերի մեջ մանրամասն թվելով փոխատվությունների առանձին ժամկետները և հանգցման գումարները։

22|32) Այն դեպքում, յերբ կարգ. ֆոնդից փոխառություն ստացող կազմակերպությանը մեկ կվարտալի ընթացքում թույլ կտա փոխառության ժամկետանցում պարտքի 10%-ից ավելի չափով, ամեն անգամ 5 օրվա ուշացումից ավելի, փոխ առնողները զրկվում են փոխատվություն ստանալու իրավունքից կես տարի ժամանակով՝ այն կիսամյակից հետո, յերբ տեղի յե ունեցել ժամկետանցը։

23|33. Սպառկոոպերացիայի յերկրային կազմակերպությունների, ինչպես և ազգային միությունների կողմից Ցենտրոսոյուզի կենտրոնացված կարգավորման ֆոնդից ստացված գումարները փոխանցվում են վոչ թե նրանց հաշվարկային հաշվին, այլ սպառկոոպերացիայի շրջանառու միջոցների կարգավորման տեղական ֆոնդերի հատուկ առանձնական հաշվին Պ. Բանկում գտնվող «Սպառկոոպերացիայի շրջանառու միջոցների կարգավորման ֆոնդերի» բալանսային հաշվում։

Սպառկոոպերացիայի Երկրային (մարզային) կազմակերպությունները իրավունք ունեն օգտվել այդ հաշիվներով միմիայն իրենց սիստեմայի կազմակեր-

պությունների փոխատվություններ տալու համար, այն նպատակների համար և կարգով, վորոնք սահմանված են ԽՍՀՄ Ժողկոմխորհի 15/II-32 թ. № 164 վորոշմամբ և սույն հրահանգով։

Այդ հաշիվներին պիտի մուծվեն նաև Յերկրային (մարզային) կազմակերպությունների կողմից տրված փոխատվությունների մարման բոլոր վճարումները։

Ծանոթություն.— Յեթե Ցենտրոսոյուզի կողմից փոխատվությունը տրվում է Յերկրային (մարզ.) կազմակերպությանը իր տնտեսության կարիքների համար, այդ դեպքում փոխատվության գումարը Պետ—Բանկի բաժանմունքի կողմից փոխանցվում է նրա հաշվարկային հաշվին, այն էլ ունենալով Ցենտրոսոյուզի կողմից համապատասխան թույլատվությունը։

24/34. Հանրապետական, մարզային և ազգային միությունները իրենց սիստեմայի կազմակերպություններին տալիս են փոխատվություն կարգավորման տեղական ֆոնդերի իրենց հատուկ հաշիվներից հետևյալ կարգով.

ա) Ստորադաս օղակի դիմումը քննելուց և հաստատելուց հետո միությունները տալիս են Պ. Բանկի իրենց բաժանմունքին կարգադրություն փոխատվություն տալու մասին, միաժամանակ ուղարկելով յերկու որինակ լրացրած պարտավորագիր փոխ առնողի կողմից ստորագրելու համար։

բ) Տրված գումարը Պ. Բանկի Յերկրային (հանրապետ) գրասենյակը դուրս է գրում միության կարգավորման տեղական ֆոնդի հատուկ հաշվից և փոխադրում է Պ. Բանկի այն գրասենյակին, վորտեղ գտնվում է փոխ առնողը։



գ) Պ. Բանկի վերջին (շրջանային) բաժանմունքը վերցնում է փոխ առնողի ստորագրությունը պարտավորագրերի վրա և փոխատվության գումարը փոխանցում է նրա հաշվարկային հաշվին։

դ) Պ. Բանկի բաժանմունքը ստորագրված պարտավորագրի մի որինակը ուղարկում է փոխատու միության, իսկ մյուս որինակը պահում է իր մոտ ժամկետային կարտատեկայում, վորով և հետևում է փոխատվության գումարների լրիվ և յուրաժամանակ մարմանը։

յե) Այն դեպքում, յեթե մի վորևէ պատճառով փոխատվության գումարը փոխ առնողի կազմակերպության չի տրվում, Պ. Բանկի բաժանմունքը այդ գումարը վերադարձնում է Պ. Բանկի գրասենյակին, իսկ վերջինն այդ գումարը գրանցում է համապատասխան միության տեղական կարգավորման ֆոնդի հատուկ հաշվի պահանջին։

Ծանոթություն. – Շրջսպառկոոպմիությունները կարգավորման ֆոնդից փոխատվություն ստանում են միմիայն իրենց տնտեսության կարիքների համար. Նրանց չի թույլատրվում փոխատվություն տալ գյուղկոոպներին, իսկ հատուկ բացառիկ դեպքերում՝ հնարավոր է վերադաս միության թույլատվությամբ։

25/35) Այն դեպքում, յերբ Յերկրային Միության կազմակերպության փոխ առնողը իր վճարումներն ըստ պարտավորագրերի ժամկետանց է անում, Պ. Բանկի տեղական բաժանմունքները (այդ պարտավորագրերը հաշվարկի առնող) պարտավորագիրը մարելու համար ինքնուրույն կերպով դուրս են գրում կազմակերպության հաշվարկային հաշվում ժամկետի որին մնացած

գումարները օրենքով սահմանված պարտադիր վճարումները կատարելուց հետո (ֆինժողկոմի հիմնակ և եր սոցապգանձարկը, Պ. Բանկի ժամկետանց վճարումները և այլն)։

Ժամկետի որին յեղած հաշիվ — ֆակտուրաները, ինչպես ակցեպտի յենթարկված, նույնպես և յենթակա ավտոմատիկ կերպով վճարման, նաև փոխ ճշտապահ փոխ առնողի մյուս վճարման հանձնարարությունները վճարվում են Պ. Բանկի կողմից փոխատվությունը մարումից հետո հաշվարկային հաշվում մնացած գումարներից։

Յեթե և այդ դեպքում փոխ առնողի հաշվարկային հաշվում չի լինի բավականի գումար պարտավորագրի լրիվ մարման համար, Պ. Բանկի բաժանմունքը ժամկետանցի և փոխատվության չմարված գումարի մասին հեռագրով հայտնում է փոխատվության տվող միութենական կազմակերպության և հետագա 30 օրվա ընթացքում դադարեցնում է բոլոր վճարումները փոխ առնողի հաշվարկային հաշվից՝ բացառությամբ հետևյալ պարտադիր վճարումների՝ Ֆժկ հիմնարկներին, Սոցապին, աշխատավարձ, Պ. Բ. ժամկետանց փոխատվությունների և օգտագործված արագ փչացող ապրանքների վճարման համար, — կուտակելով այդ ժամանակամիջոցում փոխ առնողի հաշվարկային հաշվում անհրաժեշտ գումար պարտավորագիրը լրիվ մարելու համար։

30-օրվա ժամկետից հետո Պ Բանկի բաժանմունքը դուրս է գրում փոխ առնողի հաշվարկային հաշվում կուտակված գումարը և Պ. Բ. Կրասնոյարսկի միջոցով պահանջագրում է փոխատուի տեղական կարգավորման ֆոնդի հատուկ հաշիվը, վերադարձնելով փո-



խատուին չվճարված պարտավորագիրը, նշելով նրանում մասնակի կերպով ստացած գումարների վճարումը։

27/36) Յերկրային կամ հանրապետական փոխատվություն տվող կազմակերպությունը, նախքան Պ. Բանկի բաժանմունքից փոխատվության ժամկետանցի մասին տեղեկություն ստանալը, պետք է տա նախորդ կետում նշված ժամկետի ընթացքում բանկի բաժանմունքին կարգադրություն հետագա գործունեության մասին (փոխառության տա կետում, նրա բաժանումը ըստ նոր ժամկետների և այլն)։

Ծանոթություն. — Յեթե Յերկրային (մարզ) կազմակերպությունը գտնում է անհրաժեշտ դիմել ժամկետանց փոխառության ստիպողական գանձումը, կատարողական թերթ ստանալը և նրա ռեալիզացիան կատարում է Յերկրային (մարզ) կազմակերպությունը—փոխատուն։

28/38) Փոխ առնողները, վորոնք ստանում են փոխատվություն կարգավորման կենտրոնական ֆոնդից, պարտավոր են տալ փոխատվություն իրենց ցանցի կազմակերպություններին այն հաշվով, վորպեսզի այդ փոխատվությունների մարումը լրիվ կերպով ապահովի գումարների վերադարձը, Ցենտրոսոյուզի կենտրոնական ֆոնդին։

2 /40) Փոխատվությունները, վորոնք տրվում են ինչպես կարգավորման կենտրոնական, նույնպես և տեղական ֆոնդից—անտոկոս են։

30/41 Պետական բանկի Մոսկվայի գրասենյակում բացված № 6275 հաշիվ-վ և «փոխատվություններ, տրրված կարգավորման ֆոնդի հաշվին»—հաշվով, նույնպես Պետական Բանկի Յերկրային (մարզային) գրա-

անդամակներում յերկրային կազմակերպություններին համար բացվող կարգավորման տեղական ֆոնդերի հատուկ հաշվով պետական բանկի կողմից հաշվում են տոկոսներ տարեկան 5%։

Տոկոսների վրա գալը և վճարումը կատարվում է տարեկան մեկ անգամ։

Կարգավորման կենտրոնական ֆոնդի № 6275 յենթահաշիվներով Պ. Բանկի կողմից տոկոսներ չեն վճարվում։

8 և 9-դ կետերում նշված գումարների դեկադային հեռագրով փոխադրության ծախսերը կատարվում են Պ. Բանկի հաշվին։

Ինչպես կարգավորման կենտրոնական ֆոնդից, նույնպես տեղական հատուկ հաշիվներից գումարներ տալը Պետ. Բանկի կողմից կատարվում է առանց կոմիսիայի և ծախսերի ստանալու (ձրի կերպով)։

31/42. Սույն հրահանգը ուժի մեջ է մտնում տեղերում ստացման օրից։

Ցենտրոսոյուզի վարչանդամ՝ (ԳԼՈՒԶԲԵՐԳ)
Պետբանկի վարչանդամ՝ (ԱԲՆՁԳԱՈՒԶ)

5/III 32 թ.

Իսկականի հետ ճիշտ է՝ (Վ. ԽԱՉԻԿՅԱՆ)

Ծանոթություն.—Համարները ըստ կարգի՝ համարիչում Հայկոոպի թարգմանած հրահանգի համարներն են, իսկ հայտարարում՝ Ցենտրոսոյուզի հրահանգի համարները։



ՀԱՅԿՈՈՊ
ՖԻՆ. ՍԵԿՏՈՐ
№ ..........
«.....» .............193 թ.
Յերևան

Ձև № 1

Սպառողական կոոպերացիայի շրջանառու միջոցների կարգավորման ֆոնդի մասին Խ.Ս.Հ.Մ. Ժողկոմխորհի 16/II—1932 թ. № 164 վորոշման գործադրման կարգով։

..............................................................

Քաղաք
Գյուղ ..............................................

Պատճեն Պետբանկի .............................. Գրասենյակին
Բաժանմունքին

## ՊԼԱՆ—ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՖՈՆԴԻ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

193 թ. ..................... յեռամսյակի համար

Սույն թվի ............ յեռամսյակում ձեր մխտեմալից հասնում է կարգավորման ֆոնդին ռուբլի համաձայն հետևյալ հաշվարկի՝

1) Փայավճարների պլանային հանձնարարության ............ ռուբ. գումարից % ..................... Ռուբ. .....................

2) Պլանային օգուտի ընդհանուր գումարից ............ Ռուբ. % ..................... Ռուբ. ..........

Ընդամենը Ռուբ. ..........

Ամբողջ այդ գումարը յենթակա է մուծման Ցենտրոսոյուզի կարգավորման ֆոնդի յենթահաշվին Պետբանկի համապատասխան բաժանմունքներում հետևյալ ժամկետներին՝

______ ամսվա առաջի տասնօրյակին ______ ռուբ. կամ ......%

...... ամսվա » » ______ ռուբ. կամ ......%

...... ամսվա » » ...... ռուբ. կամ ......%

Համաձայն այդ ժամկետների Ձեր կողմից պիտի դուրս գրվեն վճարման կարգադրություններ ակցեպտական վճարողների վրա։

Կարգավորման ֆոնդի հրահանգի 13 դ հոդվածում նախատեսված հանձնարարությունները և վճարման կարգադրությունները Ձեր կողմից պիտի տրվեն Պետբանկի բաժանմունքներին և ուղարկվեն Ձեր ցանցի կազմակերպություններին 3 օրից վոչ ուշ սույնը ստանալուց հետո Սույն հանձնարարության կատարման դանդաղումը առիթ կծառայի Ձեր սիստեմայի վճարման ամբողջ գումարի դուրսգրմանը Ձեր հաշվարկային հաշվից, համաձայն մեր կողմից Պետբանկին ուղարկած վճարման կարգադրությունների։

Վարչության անդամ

Ֆինսեկտորի վարիչ՝



Ձև № 2

Հ. Ս. Խ. Հ.
«ՀԱՅԿՈՈՊ»
ՖԻՆ—ՍԵԿՏՈՐ
№ ......
«......» ______ 193 թ.
Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿ ______ Գրասենյակին / Բաժանմունքին

## ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ՎՃԱՐՄԱՆ ՀՐԱՄԱՆ

...... ՌՈՒԲ.

«______» ...... 193 թ. Դուրս գրեցեք մեր Ձեզ մոտ յեղած № ______ հաշվարկային հաշվից ......
(Գումարը բառերով)

...... և փոխանցեք Ցենտրոսոյուզի կարգավորման ֆոնդի №32/6275 յենթահաշվին Ձեր գրասենյակում։

Հայկոոպի վարչություն՝

## ՊԵՏ ԲԱՆԿԻ ՆՇՈՒՄՆԵՐԸ

Փոխանցված է կարգավորման ֆոնդի № 63—1177 հաշվին

«......» ______ 193 թ. ______ Ռուբ.

«______» ...... 193 թ. ...... Ռուբ.

«______» ...... 193 թ. ...... Ռուբ.

(Ձև № 8-ի 2-րդ յերեսը)

## ՀԱՅԿՈՈՊԻՆ

Վերադարձնում ենք անվերադարձ վճարման հրամանը չվարված ........................ ________ գումարի

(Գումարը բառերով)

սահմանում։

Մյուս մասի վճարումները փոխանցվում են կարգավորման ֆոնդի յենթահաշվին համաձայն հրամանում տրված նշումների։

Բետ-Բանկի .................................... բաժանմունք

(Ստորագրություն)



Ձև № 8

Հ. Ս. Խ. Հ.
«ՀԱՅԿՈՈՊ»
ՖԻՆ—ՍԵԿՏՈՐ
№ ______
«......» ............193 թ.
Յերևան

ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ՊԵՏԲԱՆԿԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ 2 ՈՐԻՆԱԿ

Սպառողական կոոպերացիայի շրջանառու միջոցների կարգավորման ֆոնդի մասին ԽՍՄ Ժողկոմխորհի 16/2 — 32 թ. № 164 վորոշման գործադրման կարգով։

________________________________________

(Այսինչ կոոպկազմակերպության) (քաղաք կամ գյուղի անվանումը)

Պետական բանկի ________________ բաժանմունքին

Վճարման կարգադրություն ____________ Ռուբլի

«______» ........................193 թ. Փոխանցեցեք Սպառ-կոոպերացիայի շրջանառու միջոցների կարգավորման ֆոնդի №32/6275 յենթահաշվին Պետբանկի Հայաստանի բաժանմունքում ________________ ռուբլի։

(գումարը բառերով)

Դուրս գրելով այդ գումարը վերև հիշված կազմակերպության հաշվարկային հաշվից։

Հայկոոպի վարչություն՝

(Ձև № 3-ի II-րդ յերես)

Պետ. Բանկի նշումներ
Փոխանցված և կարգավորման ֆոնդի հաշվին
«____» ____ 193 թ. № ____ հաշվարկ
հաշվից ____ ռուբ.
«____» ____ 193 թ. հաշվարկահաշվից
____ ռուբ.
«____» ____ 193 թ. № ____ հաշվարկի հաշվից
____ ռուբլի.
Ընդամենը՝ ____ Ռուբ.

## ՀԱՅԿՈՈՊԻՆ

Յերևան

Վերադարձնում ենք Ձ՚ր վճարման կարգադրությունը չվճարված վճարող կազմակերպության կողմից

____ ռուբ.

գումարով։

Մյուս մասի վճարումները փոխանցված են Ձեր կարգավորման ֆոնդին սրա վերևում թված գումարներով և ժամկետներին։

Պետբանկի ____ բաժանմունք

(Ստորագրություն)



Ձև № 4

Հ. Ս. Խ. Հ.
«ՀԱՅԿՈՈՊ»
№ ____
«____» ____ 193 թ.
Յերևան

## ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎՃԱՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (1 օրինակ)

Սպառողական կոոպերացիայի շրջանառու միջոցների կարգավորման ֆոնդի մասին ՀՍԽՀ Ժողկոմխորհի 16/2—19/2 թ. № 164 որոշման գործադրման կարգով ____

(Սպառ. կոոպկազմակերպության)

Պետական Բանկի ____ բաժանմունքին.

Վճարման կարգադրություն ____ ռուբլի.

«____» ____ 193 թ. մուծեք սպառկոոպերացիայի շրջանառու միջոցների կարգավորման ֆոնդի ընթացիկ հաշվին Հայաստանի գրասենյակում ____ համաձայն ____ Ձեզ

(Գումարը գրել բառերով) (ժամանակը)

ուղարկված կարգավորման ֆոնդին Ձեր մուծումների հատուկ հաշվարկի։

Հայկոոպի վարչություն՝

# ՔԱՂՎԱԾՔ

ԽՍՀՄ Ժողկոմխորհի 16/II—1932 թ. № 3 արձանագրության № 165 կետից

## ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՆԵՐՍԻՍՏԵՄԱՅԻՆ ԴՐԱՄԱԳԼԽԻՆԵՐԻՆ ՅԵՎ ՖՈՆԴԵՐԻ, ԿԱՏԱՐՎՈՂ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կապիտալ շինարարության, կուլտուրական և այլ կարիքները հոգալու համար միջոցների մոբիլիզացիայի գործում սպառկոոպերացիայի սիստեմայի վրա դրված խնդիրների կատարումը ապահովելու նպատակով՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհը որոշում է՝

1) Ցենտրոսոյուզի կողմից տրվող կարգադրությունները տարեկան և կվարտալային պլանների հիման վրա ներսիստեմային դրամագլուխներին և ֆոնդերին մուծումներ կատարելու մասին հանդիսանում են պարտադիր սիստեմայի բոլոր կազմակերպությունների համար՝ ինչպես գումարների, նույնպես և այդ մուծումների ժամկետների վերաբերմամբ.

2) Այդ մուծումների գանձման համար գործադրվում է այն կարգը, որը սահմանված է կարգավորման ֆոնդի վերաբերմամբ.

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ՝ *ՄՈԼՈՏՈՎ*

*(Սկրյաբին)*



# ՀՐԱՀԱՆԳ

Կապիտալ շինարարության ֆինանսավորման համար Համկոոպբանկում գտնվող սպառողական կոոպերացիայի ֆոնդերի միջոցների մոբիլիզացիայի կարգի մասին, համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի № 15/II-1932 թ. № 165 որոշման

---

1) Յերկարատև վարկավորման ֆոնդը (Յ.Դ.Կ.) և սպառկոոպերացիայի հատուկ ավանդները սպառկոոպերացիայի կապիտալ շինարարության վարկավորման համար, կազմում են համամիութենական ներսիստեմային ֆոնդ և հավաքվում են համաձայն Ցենտրոսոյուզի կողմից հաստատված պլանների.

2) Ամեն մի յեռամսյակում Ցենտրոսոյուզի նախագահությունը (նրա սեկցիաները և միավորումները) և Համկոոպբանկի վարչությունը միատեղ ստորագրությամբ տալիս են մարզային, յերկրային և հանրապետական միություններին (կամ համապատասխան մարզային տրեստին, սեկցիային) և Պետբանկի գլ. գրասենյակներին պլանային հանձնարարություն սիստեմայի միջոցների մոբիլիզացիայի համար.

3) Համաձայն տրված հանձնարարությունների մարզային, յերկրային և հանրապետական միությունները հինգ օրվա ընթացքում պարտավոր են՝

ա) Բաշխել տրամադրված հանձնարարությունը ըստ իր ենթակա կազմակերպությունների և բաշխման ցուցակը ներկայացնել Պետբանկի գրասենյակին։

բ) Դուրս գրել 5-րդ կետում ցույց տված վճարման կարգադրությունները իրենց անմիջականորեն ենթակա սկզբնական կազմակերպություններին (փակբանկոոպ, կենտրանկոոպ, ձեռնարկներ) և երկրային ու մարզային միավորումներին։

գ) Դուրս գրել և ուղարկել պլան-հանձնարարությունները շրջսպառկոոպմիություններին. այդ պլան-հանձնարարությունների երկրորդ օրինակը հանձնել Պետբանկի երկրային գրասենյակներին, որոնք իրենց կողմից ուղարկում են Պետբանկի շրջանային բաժանմունքներին, որտեղ գտնվում է շրջսպառկոոպմիության հաշվարկային հաշիվը. ուղեկցող գրությունը ստորագրվում է Պետբանկի և սպառկոոպմիության կողմից։

Վճարման ենթակա այն գումարի համար, որը ընկնում է իր տնտեսության վրա, միությունը միաժամանակ տալիս է Պետբանկի գրասենյակին անվերապահ վճարման հրաման իր հաշվարկային հաշվին։

Ծանոթություն. Հատուկ ավանդներին մուծումներ կատարելու համար վճարման կարգադրությունը դուրս է գրվում յուրաքանչյուր ամիս համաձայն հրահանգի 5-րդ կետի։

4) Շրջսպառկոոպմիությունը ստանալով պլան-հանձնարարությունը, պարտավոր է յոթ օրվա ընթացքում ներկայացնել Պետբանկի շրջանային բաժանմունքին՝



ա) Հանձնարարության գումարի բաշխման ցուցակը ըստ իր սիստեմայի կազմակերպությունների, մտցնելով նրա մեջ և այն գումարը, որը ընկնում է շրջմիության տնտեսության վրա։

բ) Վճարման կարգադրությունները այն գյուղկոոպներին և միության մյուս կազմակերպություններին, որոնք ունեն ընթացիկ կամ հաշվարկային հաշիվ Պետբանկում։

գ) Անվերապահ վճարման հրաման վճարման այն մասի համար, որը ընկնում է շրջմիության տնտեսության և այն գյուղկոոպների վրա, որոնք Պետբանկում չունեն ընթացիկ կամ հաշվարկային հաշիվ։ Եթե նշված ժամկետին թված նյութերը լրիվ կամ մասնակի կերպով չեն ներկայացվի Պետբանկի շրջանային բաժանմունքին, վերջինը դրա մասին հեռագրով տեղեկացնում է Պետբանկի գրասենյակին, պատճեն ուղարկելով միությանը։ Միությունը այդպիսի դեպքում կարող է դուրս գրել համապատասխան գումարի վճարման կարգադրություն անմիջականորեն իր հաշվարկային հաշվին։ (Նույնը շրջսպառկոոպմիության հաշվարկային հաշվին կատարվում է նաև մարզային և հանրապետական միությունների նկատմամբ Ցենտրոսոյուզի կողմից)։

Ծանոթություն.— Պետբանկի բաժանմունքը ստացած վճարման կարգադրությունները ու հրամանները պահում է հատուկ քարտոտեկայում (քարտերի արկղ) կամ թղթապանակում, դասավորված վճարումների ժամկետներով։

5) 3-րդ և 4-րդ կետերում հիշված վճարման կարգադրությունները, նաև վճարման հրամանները (ձևը կցվում է) դուրս են գրվում վերադաս մարմինների կողմից հետևյալ կարգով՝

ա) Վճարման կարգադրությունները և հրամանները յերկարատև վարկավորման ֆոնդի (Յ.Դ.Կ.) համար դուրս են գրվում ամեն մի յեռամսյակի համար մեկ անգամ 3-րդ և 4-րդ կետերում սահմանված ժամանակամիջոցում (միության համար—5 օրվա, շրջմիության համար—3 օրվա ընթացքում) առանձին կարգադրություններով վճարման ամեն մի ժամկետի համար, ըստ վորում վճարման կարգադրությունների ընդհանուր գումարը կվարտալի համար դուրս է գրվում վճարող կազմակերպության անունով Յ.Դ.Կ.-ի պլան-հանձնարարության յեռամսյակային գումարի չափով։

բ) Վճարման կարգադրությունները և հրամանները հատուկ ավանդների համար դուրս են գրվում յուրաքանչյուր ամիս։ Վճարման կարգադրությունների (հրամանների) ամսվա գումարը դուրս է գրվում յելնելով նախորդ ամսվա փաստացի փայահավաքումից, համաձայն սպառկոոպերացիայի ցանցի հեռագրական տվյալների և պլան-հանձնարարություններով վորոշված հատուկ մուծումների հատկացման տոկոսի։

Օրինակ՝ — Պլանով փակրանկոոպի II-դ յեռամսյակի փայակուտակումը վորոշված է 150,000 ռ. հատուկ ավանդների հատկացման տոկոսը վորոշված է— 40%։ Ապրիլ ամսվա փաստացի փայահավաքումը կազմել է համաձայն հեռագրական տվյալների 60000 ռուբ., այդ պայմաններում Մայիս ամսվա համար վճարման կարգադրությունը միության կողմից դուրս է գրվում 24000 ռուբ (40% 60000 ռուբ.)։

գ) Վճարման կարգադրությունները (հրամանները) դուրս են գրվում վոչ ուշ ամսի 20-ից յերկրային (հան-



րապետական) և վոչ ուշ ամսի 10-ից շրջանային կազմակերպությունների կողմից։

Վճարումների ներյեռամսյակային որոցուցային ժամկետները սահմանվում են վերադաս կազմակերպությունների կողմից ըստ նրանց հայեցողության, այնպես, սակայն, վորպեսզի մարզից կամ շրջանից տվյալ ամսում հասանելիք փաստացի հատկացումները հատուկ ավանդներին կատարվեն այդ ամսվա 30-ից վոչ ուշ. ըստ վորում ամեն մի ամսվա համար չի կարող լինել մեկ վճարումից ավելի։

դ) Այն դեպքում, յերբ վճարման կարգադրությունները կամ հրամանները դուրս գրելու համար սահմանված ժամկետին այս կամ այն կազմակերպությունից չունեն հեռագրական տվյալներ անցյալ ամսվա փայակուտակման մասին վերադաս օղակի տրամադրության տակ, վերջինը դուրս է գրում վճարման կարգադրությունները այն գումարով, վորը հավասար է կվարտալային պլան առաջադրանքի հատուկ ավանդներին հատկացվելիք գումարի մեկ յերրորդին։

ե) Վճարման կարգադրությունները (հրամանները), (ձևը կցվում է), վորոնք դուրս են գրված վերադաս կազմակերպությունների կողմից, անվիճելի յեն և յենթակա յեն վճարման հետևյալ կարգով—

ա) Վճարման կարգադրությունները դուրս են գրվում վերադաս կազմակերպության կողմից ստորադասի վրա յերկու օրինակից, առաջի օրինակները հանձնվում են Պետբանկի համապատասխան գրասենյակին կամ բաժանմունքին սահմանված ձևի ռեեստրի հետ, կցելով տեղեկանք նախորդ ամսվա փայավճարների գանձման ընթացքի մասին (ձևը կցվում է)։

Պետբանկի գրասենյակը (կամ բաժանմունքը) թողնում է իր մոտ այն վճարման կարգադրությունները, որոնց վճարող կազմակերպությունների հաշվարկային ընթացիկ հաշիվները գտնվում են այդ գրասենյակում (կամ բաժանմունքում), իսկ մնացած վճարման կարգադրությունները ուղարկում է բանկի բաժանմունքներին, որտեղ գտնվում են համապատասխան վճարող կազմակերպությունների հաշվարկային կամ ընթացիկ հաշիվները։

Վճարման կարգադրության երկրորդ օրինակները ուղարկվում են անմիջականորեն վճարող կազմակերպություններին դուրս գրող վերադաս կազմակերպության կողմից։

բ) Եթե վճարման կարգադրության մեջ նշված ժամկետին վճարումը չի կատարվում, Պետբանկի բաժանմունքն ինքնուրույն կերպով դուրս է գրում վճարման կարգադրության գումարը վճարող կազմակերպության հաշվարկային կամ ընթացիկ հաշվից։

գ) Նախորդ կետում նշված ինքնուրույն դուրս գրումները կատարվում են հաշիվ-ֆակտուրաների հետ ընդհանուր հերթով։

Ծանոթություն.—Հաշիվ—ֆակտուրաների և սպառկոոպերացիայի ֆոնդերին մուծումներ կատարելու համար տրված վճարման կարգադրությունների միաժամանակ ստանալու դեպքում ինքնուրույն կերպով դուրս գրելու հերթականության առաջնությունը տրվում է վերջիններին, հաշվի առնելով առաջնությունը ներքև ցույց տրված վճարումների (կետ «դ»),

դ) Այն դեպքում, երբ վճարող կազմակերպության հաշվարկային կամ ընթացիկ հաշվում չլինեն անհրաժեշտ միջոցներ վճարման կարգադրությունը



լրիվ վճարելու համար, Պետբանկի բաժանմունքները ժամկետին չեղած գումարները դուրս են գրում և հետագայում, մինչև հաշվարկային հաշվում կարգադրության գումարի կուտակում, կատարում են միմիայն օրենքով նախատեսված հետևյալ պարտադիր վճարումներն այդ հաշվից. աշխատավարձի վճարման համար, սոցապգանձարկղին, Պետբյուջեին, ինպորատային կանխավորման, արագ փչացող մթերքների օգտագործման համար, Պետբանկի և Համկոոպբանկի ժամկետային փոխատվությունների և սպառկոոպերացիայի ՇՐԲ-յին ... ջանատու միջոցների կուտակման ֆոնդի մուծումների համար։

Մասնակի կերպով դուրս գրված գումարի մասին տրվում է նշում վճարման կարգադրության վրա և դուրս է բերվում մնացորդը։

Այն դեպքում, եթե ըստ հաշվարկային կամ ընթացիկ հաշվի դրության հիշված գումար դուրս գրումը չի կարող տեղի ունենալ, վճարման կարգադրությունը տեղափոխվում է քարտոտեկային հետևյալ օրվա ժամկետի բաժինը. հետևյալ տեղափոխումը կատարվում է 20 օր ժամկետից մինչև այն ժամանակ (բայց ոչ քան 20 օր ժամկետից), մինչև որ հաշվարկային կամ ընթացիկ հաշվում չի լինի վճարման կարգադրության մնացորդը ծածկելու համար անհրաժեշտ գումար։

Եթե 20 օրվա ընթացքում վճարողի հաշվարկային հաշվում չը հավաքվի անհրաժեշտ միջոցներ վճարման կարգադրությունը լրիվ մարելու համար, կուտակված գումարը փոխանցվում է Համկոոպբանկի ֆոնդերի ... Միաժամանակ Պետբանկի բաժանմունքը իր հաշվին։

անկախ նրանից թե ում կողմից է ուղարկված վճարման կարգադրությունը, վերադարձնում է վճարման կարգադրությունը դուրս գրող կազմակերպության, նշումներով ստացված վճարումների մասին. վերջինս (կազմակերպությունը) չվճարված գումարի համար կարող է դուրս գրել նոր վճարման կարգադրություն նույն կազմակերպության վրա, կամ թե դուրս գրել վճարման կարգադրություն մարզի մյուս կազմակերպության վրա, ըստ որում նրա վճարումը Պետբանկի կողմից կատարվում է վերև առաջադրած ձևով։

է) Ցանցերին կատարված մուծումների վերահաշվարկը փաստացի կուտակումներից հնարավոր շեղումների դեպքում կատարվում է Ցենտրոսոյուզի կողմից համաձայն միության բալանսային և հաշվետվության տվյալների. մասնավորապես Ց. Դ. Կ.-ի մուծումների վերահաշվարկը կատարվում է համաձայն սպառկոոպմիության կողմից ներկայացրած միության և նրա սիստեմայի շահ ու վնասի առանձին հաշիվների—տարեկան յերկու անգամ (կիսամյակներով), ըստ որում առ 1-ն հուլիսի դրությամբ կատարվում է նախնական վերահաշվարկ, իսկ յերկրորդ կիսամյակի վերջին՝ վերջնական։ Հայտնաբերված ավել կամ պակաս մուծումները Ցենտրոսոյուզի կողմից անդրադառնում են հետևյալ յեռամսյակի պլանում հաշվետվությունը ստանալուց հետո։ Ավելորդ մուծված գումարների մուծող կազմակերպությանը վերադարձնելու անհրաժեշտության և նրանց համար հետագա



ժամանակաշրջանի նկատմամբ պլան—հանձնարարության բացակայելու դեպքում Ցենտրոսոյուզը տալիս է հատուկ կարգադրություն Համկոոպբանկին այդ ավելորդ մուծած գումարները վերադարձնելու մասին։

Ծանոթություն.—1932 թվականում հուլիսի 1-ին վերահաշվառում չի կատարվում։

Պետբանկի վարչանդամ՝ (ԼԱՆԴԵ)
Համկոոպբանկի վարչնախ.՝ (ՎՈՒՅԼ)
Ցենտրոսոյուզի վարչանդամ՝ (ԳԼՈՒՋԲԵՐԳ)
Իսկականի հետ ճիշտ է՝ (Գ. ԽԱՉԻԿՅԱՆ)

13/IV-32 թ. № Փ 23

Հ. Ս. Խ. Հ.
«ՀԱՅԿՈՈՊ»
ՑԻՆ ՍԵԿՏՈՐ
№ ........
«........» ........ 193 թ.
Երևան

Ձև №1

Առաջին օրինակը ուղարկվում է ռեեստրի հետ Գ․․բանկի բաժանմունքին (գրասենյակին) չերկրորդ՝ վճարողին.

Պետական բանկի ........................ (կազմակերպության անվանումը)

Վճարման կարգադրություն ........................ բաժանմունքին.

«........» ........................ ռուբ.

........................ 193 թ. փոխադրեցեք Համկոոպբանկի ֆոնդին Ձեզ մոտ սպառկոոպերացիայի կապիտալ շինարարության ֆինանսավորման համար՝

1. Ցերկարատև վարկավորման ֆոնդին (Ց. Դ. Կ.) բալանսային հաշիվ № 285 հատկացումներ 193 թ. օգոստոսի գումարով ........ ռուբ.
(գումարը բառերով)

2. Հատուկ ավանդների ֆոնդին (բալանսային հաշիվ № 288) հատկացումներ ........ ամսվա փայակուտակումից գումարով ........ ռուբ.
Գործ որելով գումարը վերև բերված կազմակերպության հաշվարկային (ընթացիկ) հաշվից։ (գումարը բառերով)

Ծանոթություն.—Ամեն մի ֆոնդի համար տրվում է առանձին կարգադրություն. վորը հարկավոր չէ, ջնջվում է։

Պետ բանկի նշումները.
Փոխանցված է Համկոոպբանկի ֆոնդին՝
(բալանսային հաշիվ № ___ )
«....» ........ 193 թ. ........ Ռուբ.
«....» ........ 193 թ. ........ Ռուբ.
«....» ........ 193 թ. ........ Ռուբ.

Հայկոոպի վարչություն՝





(Ձև № 1-ի II-րդ չերես)

ԳԵՏԲԱՆԿ ______
ԳՐԱՍ ն. — ԲԱԺ.
№ ........
«........» ........ 193 թ.
քաղաք

........................
(Վճարման կարգադրությունը դուրս գրող կոոպկազմակերպության անվանումը)

(Հասցեն) ........................

Վերադարձնում ենք Ձեր վճարման կարգադրությունը, չվճարված վճարողի կողմից գումարով ........................

Մնացած գումարների վճարումները փոխանցված են Համկոոպբանկի ֆոնդին մեզ մոտ (բալանսային հաշիվ ........) առաջին չերեսում թված գումարներով և ժամկետներով։

Գետբանկի ........................ Գրասենյակ
Բաժանմունք

(Ստորագրություն)

## ՀԱՎԵԼՎԱԾ ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՖՈՆԴԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԻ ՀՐԱՀԱՆԳԻ 6-րդ կետի.

## ՌԵՅԵՍՏՐ

Վճարման կարգադրությունների և անվերապահ վճարման հրամանների, ներկայացված ........................................ Սպառկոոպերացիայի միության կողմից

Պետ բանկի ........................................ Գրասենյակը / Բաժանմունքը

| №№ ըստ կարգի | Վճարողի անվանումը ըստ հրամանի կամ կարգադրության | Հաշվարկի հիմքը: Փաստացի փայհանումը ........ ամսում | Հաշվարկի հիմքը: Հատկացման %-ը | Հրամանի կամ կարգադրության գումար | Հրամանի կամ կարգադրության ժամկետը | Վճարման տեղը | Նշում. բաժն. մասին: Նշումներ բանկի բաժանմունքին ուղարկելու մասին | Նշում. բաժն. մասին: Նշումներ վճարելու մասին |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | | 4 | 5 | 6 | 7 | |
| | | | | | | | | |

(Սպառկոոպմիության ստորագրությունը)

**Ծանոթություն.**— 1) Ռեյեստրը լրացվում է միության կողմից, որը դուրս է գրում վճարման հրամաններ և կարգադրություններ, և հանձնում է բանկի բաժանմունքին:

2) Բանկի բաժանմունքն այդ ռեյեստրը օգտագործում է իբրև հաշվառման օրագիր, պահելով ռեյեստրը հատուկ թղթապանակում:

3) 7-դ սյունակի համապատասխան մասում բանկի բաժանմունքը կատարում է նշումներ բանկի համապատասխան բաժանմունքին ուղարկելու մասին կամ վճարման մասին:



**ՀԱՅԿՈՈՊ**
**ՖԻՆ-ՍԵԿՏՈՐ**
№ ..........
«......» .......... 193 թ.
Ցերևան

Ձև № 3

## ՀԱՎԵԼՎԱԾ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՖՈՆԴԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԻ ՀՐԱՀԱՆԳԻ 5-րդ կետի.

Պետբանկի ........................................ Գրասենյակին / Բաժանմունքին

Անվերապահ վճարման հրաման ........................ ռուբլու

«..........» ........................ 193 թ. դուրս գրեք մեր Ձեզ մոտ լեղած հաշվարկային հաշվից № ........................................ ռուբլի և փոխանցեք՝

*) 1) Համկոոպբանկի լիկվիդացիոն վարկավորման ֆոնդին (Յ.Դ.Կ. բալանս. հաշիվ № 285) հատկացումներ 193 թ. օգուտներից ........................................ ռուբլի.

2) Համկոոպբանկի հատուկ ավանդների ֆոնդին (բալանս. հաշիվ №288) հատկացումներ ............ ամսվա փայակուտակումից ........................ ռուբլի:

(Ստորագրություններ)

**Ծանոթություն.**—Ամեն մի ֆոնդի համար դուրս է գրվում առանձին հրաման, որը հարկավոր չէ, ջնջվում են

Պետ բանկի նշումները.
Փոխանցված է Համկոոպբանկի ֆոնդին՝
(բալանսային հաշիվ № ..........)
«......» .......... 193 թ. .......... Ռուբ.
«......» .......... 193 թ. .......... Ռուբ.
«......» .......... 193 թ. .......... Ռուբ.

ՊԵՏԲԱՆԿ
ՀԱՅԱՍՏ. ԳՐԱՍ.
№ ______
«.........».............1932 թ.
Երևան

Ձև № 4

## ՀԱՎԵԼՎԱԾ ՍՊԱՌՆԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԻ ՀՐԱՀԱՆԳԻ 6-րդ կետի.

Պետբանկի ........................................ բաժանմունքին

Քաղաք ________________________________

Հարակից ուղարկելով Հայկոոպի __________ վճարման կարգադրությունները Ձեր շրջանում գտնվող Սպառկոոպկազմակերպությունների վրա, խնդրում ենք այդ կարգադրությունների հետ վարվել համաձայն Սպառկոոպերացիայի Համկոոպբանկում գտնվող ֆոնդային միջոցների մոբիլիզացիայի մասին Պետբանկի, Համկոոպբանկի և Ցենտրոսոյուզի կողմից տրված 13.4-32 թ. № Ֆ23 հրահանգի 6-րդ կետի ցուցմունքների։

Պետական բանկ ի Հայաստանի գրասենյակ՝

Ծանոթություն.— 1) Ուղեկցող նամակները մյուս յերեսի ցիչխտրի հետ լրացվում են յերկրաչի (մարզային) միության կողմից։

2) Պետբանկի բաժանմունքներին այս ուղեկցող նամակն օգտագործում են հաշվառման օրագրի փոխարեն, պահելով այդ նամակը հատուկ թղթակալում։

3) Ցիչխտրի 6-րդ սյունյակում բանկի բաժանմունքը կատարում է նշանակումներ (լրիվ կամ մասնակի վճարման և կամ վճարման կարգադրության վերադարձնելու մասին)։



ՌԵՑԵՍՏՐ

Վճարման հանձնարարությունների, դուրս գրված Հայկոոպի կողմից ________________ շրջանի կոոպկազմակերպությունների վրա։

| №№ Ը/կ. | Վճարողի անվանումը | Վճարման հանձնար. գումարը | Վճարման ժամկետը | Վճարման տեղը | Պետբանկի նշանակումները |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |

Ձև № 5

## ՀԱՎԵԼՎԱԾ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՖՈՆԴԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԻ ՀՐԱՀԱՆԳԻ 3-դ կետի.

*Պլան—հանձնարարության ուղեկցող նամակի ձևը.*

*Պետբանկի ________ բաժանմունքին*

*Քաղաք........*

*Հարակից ուղարկելով ________........ սպառկոոպմիության պլան—հանձնարարությանը ____ ........ շրջսպառկոոպմիությանը, սպառողական կոոպերացիայի կապիտալ շինարարության ֆինանսավորման համար Համկոոպբանկում գտնվող ֆոնդերի միջոցների մոբիլիզացիայի համար, խնդրում ենք հետևել շրջսպառկոոպմիության կողմից կատարելու գործողությունները, որոնք պարզաբանված են Պետբանկի, Համկոոպբանկի և Ցենտրոսոյուզի 13/IV № ֆ. 23 հրահանգի 4-րդ կետում։*

Պետբանկի գրասենյակի յեվ Սպառկոոպերացիայի յերկրային (մարզային) միության ստորագրություն



## ՀՐԱՀԱՆԳ

Սպառկոոպերացիայի կազմակերպությունների կողմից սպառկոոպերացիայի կուլտֆոնդին մուծումներ կատարելու կարգի մասին.

---

*1) Համաձայն Խ.Ս.Հ.Մ. Ժողկոմխորհի 15/II 1932 թ. № 165 որոշման, կուլտֆոնդին կատարվելիք մուծումները պարտադիր են սպառողական կոոպերացիայի սիստեմայի բոլոր կազմակերպությունների համար ինչպես գումարների, նույնպես և սպառկոոպերացիայի վերադաս մարմինների կարգադրություններով սահմանված ժամկետների վերաբերմամբ։*

*2) Կուլտֆոնդի գանձման, պահպանման և ծախսելու համար Պետական բանկում պարտադիր կերպով բացվում են հատուկ անձնական հաշիվներ հետևյալ կազմակերպությունների համար՝ Ցենտրոսոյուզի և Վսեկոոպիտի — Պետբանկի Մոսկվայի գրասենյակում, հանրապետական, յերկրային, մարզային ազգային և շրջանային միությունների, յերկրային (մարզային) ավտոնոմ սեկցիաների և հացաթխման տրեստի — Պետբանկի մյուս բաժանմունքներում։*

*Սիստեմայի մյուս կոոպկազմակերպությունների համար հատուկ անձնական հաշիվներ բացվում են ըստ վերև բերված կենտրոնների պահանջի։*

*3) Այդ հատուկ անձնական հաշիվներում պահվող գումարները կարող են ծախսվել միայն՝ — ա) կադրերի պատրաստման կուլտմիջոցառումների համար և այն էլ այդ միջոցառումների առանձին տեսակների, որոնք սահմանված են վերադաս կազմակերպությունների կողմից և բ) վերադաս կազմակերպությունների կուլտֆոնդի*

հատուկ հաշիվներին հատկացումներ փոխադրելու համար։

Միջոցների ծախսումը կուլտֆոնդի հատուկ անձնական հաշվից ուրիշ նպատակների համար (կապիտալ շինարարության, ապրանքաշրջանառության ֆինանսավորման և այլն) կտրականապես արգելվում է։

4) Կուլտֆոնդից կատարվող հատկացումների հասանելիք մասը ամեն մի կոոպկազմակերպության կողմից տրվում է իր վերադաս կազմակերպության հատուկ հաշվին։

5) Տվյալ յեռամսյակում միության կուլտֆոնդին հասանելիք մուծումների համար միությունը ուղարկում է վճարման կարգադրություն կազմակերպությունների հաշվարկային հաշվին (տես 9-դ կետ) ամեն մի ժամկետի համար առանձին և այդ կարգադրության յերկու օրինակն ուղարկում է Պետբանկի այն բաժանմունքին, վորտեղ գտնվում է հաշվարկային հաշիվը։

Կուլտֆոնդի հատուկ անձնական հաշիվներից փոխանցումները վերադաս կազմակերպությունների կուլտֆոնդերի անձնական հաշիվներին կատարվում է վերջինների կողմից տրված վճարման կարգադրությունների միջոցով՝ ստորադաս կազմակերպությունների հատուկ անձնական հաշիվներից հասանելիք գումարը դուրս գրելու մասին։

Ծանոթություն—Վճարման կարգադրության բովանդակության մեջ ցույց է տրվում Պետբանկում յեղած այն հաշիվը, վորից պիտի կատարվի հատկացումների մուծումները։

6) Հատկացումների փոխադրումը կուլտ ֆոնդի հատուկ անձնական հաշվից կամ հաշվարկային (ընթացիկ հաշվից) վերադաս կազմակերպությունների



կուլտֆոնդին, վորոնք կատարվում են ինչպես վերջիների վճարման կարգադրություններով, նույնպես և վճարող կազմակերպության հրամանով, կարող են մուտք անվել միմիայն կուլտֆոնդի հատուկ հաշվին։

Վճարման կարգադրությունները և հրամանները, վորոնք դուրս են գրված վերադաս կազմակերպության մի վորևէ ուրիշ հաշվին փոխանցելու համար, Պետբանկի բաժանմունքների կողմից կատարման չեն ընդունվում։

Ծանոթություն—Կուլտֆոնդի հատկացումները կարող են մուտք արվել վերադաս կազմակերպությունների հաշվարկային հաշիվներին միմիայն տնտհաշվարկի անցած խանութների և ձեռնարկների կողմից իրենց յերկրային (մարզային) միավորումներին և կոոպերատիվների վարչություններին հատկացումները փոխադրելու դեպքում։

7) Վորովհետև կոոպերատիվ կենտրոնները իրենց ցանցի կազմակերպություններին դոտացիա փոխադրում են միայն կապելով այդ կուլտֆոնդի միջոցների մոբիլիզացիայի ընթացքի հետ, Պետբանկի բաժանմունքները չեն կարող մերժել հայտնելու նշված կենտրոններին տեղեկություններ իրենց ցանցի կազմակերպությունների կուլտֆոնդերի հատուկ անձնական հաշիվների կրեդիտային շրջանառության և մնացորդների մասին։ Այդ տեղեկությունները ըստ կոոպկենտրոնների պահանջի Պետբանկի կողմից պիտի հայտնվեն նաև հեռագրով, ձևակերպելով հեռագրի ծախսը հատուկ անձնական հաշիվ ունեցող կազմակերպության հաշվին։

Ծանոթություն—Տեղեկանքներում ցույց են տրվում հատուկ անձնական հաշիվների կրեդիտային ամբողջ շրջանառությունը, անկախ նրանից թե փոխանցված են այդ հաշվին գումարներ նույն կազմակերպության հաշվարկային հաշվից, թե ստացվել են նրա ցանցից։

8) Կուլտ ձեռնարկների և կադրերի պատրաստման համար առաջվող դոտացիաները պետք է մուտք գրվեն կուլտֆոնդի հատուկ հաշվին։

9) 5 և 6-րդ կետերում թված վճարման կարգադրությունները, վորոնք դուրս են գրվում վերադաս կազմակերպությունների կողմից, հանդիսանում են անվիճելի և յենթակա յեն ավտոմատիկ կերպով դուրս գրման կարգադրության մեջ նշված վճարողների հաշիվներից Պետբանկում։

Յեթե վճարման կարգադրությունը գրված է կոոպկազմակերպության հաշվարկային հաշվին, այդ դեպքում Պետբանկի բաժանմունքի կողմից այդ գումարը դուրս է գրվում հաշիվ—ֆակտուրաների և սպառկոոպերացիայի մյուս ֆոնդերին հատկացումներ կատարելու (կարգավորմ. ֆոնդ, կապիտալ շինարարության ֆոնդ) մասին տրված կարգադրությունների հետ ընդհանուր հերթով։

10) Յեթե կուլտֆոնդի հատուկ անձնական հաշվին դուրս գրված վճարման կարգադրությունը լրիվ վճարելու համար այդ հաշվում ժամկետի որը բավարար միջոցներ չլինեն, Պետբանկի բաժանմունքը դուրս է գրում այդ հաշվում յեղած գումարը, փոխադրում է այդ կարգադրություն տվող կազմակերպության հատուկ անձնական հաշվին, դադարեցնում է վճարող կազմակերպության անձնական հաշվից բոլոր վճարումները մինչև համապատասխան գումարի կուտակումը կարգադրությունը լրիվ վճարելու համար։

Յեթե կարգադրության մեջ նշված վճարման ժամկետից 20 որվա ընթացքում վճարողի հատուկ անձնական հաշվում չհավաքվի բավարար գումար հանձնարարությունը վճարելու համար, Պետբանկի



բաժանմունքը փոխադրում է այդ հաշվի ամբողջ մնացորդը կարգադրություն տվող կազմակերպության կուլտֆոնդի հատուկ անձնական հաշվին և յետ է ուղարկում նրան այդ կարգադրությունը։

11) Համապատասխանորեն Պետբանկի բաժանմունքի կողմից կատարվում է մարումը վճարման կարգադրությունների, վորոնք դուրս են գրված ստորադաս կոոպկազմակերպությունների հաշվարկային հաշվին, յեթե ժամկետի որը վճարողի հաշվարկային հաշվում չը լինի համապատասխան գումար հանձնարարությունը վճարելու համար։ Այդ դեպքում Պետբանկի բաժանմունքը հաշվարկային կամ ընթացիկ հաշվի ամբողջ մնացորդը փոխանցում է կարգադրություն տվող կազմակերպության կուլտֆոնդի հատուկ անձնական հաշվին և դադարեցնում է այդ հաշվից բոլոր վճարումները, բացի օրենքով սահմանված պարտադիր վճարումներից, այն է՝ Ֆինժողկոմին, Սոցապգանձարկղին, աշխատավարձ, արագ փչացող մթերքների օգտագործման համար, Պետբանկի ժամկետանց փոխատվությունների, կարգավորման ֆոնդի և կապիտալ շինարարության ֆոնդի մուծումների համար տրված վճարման կարգադրությունների։

Յեթե կարգադրության մեջ նշված ժամկետից 20 որվա ընթացքում վճարող կազմակերպության հաշվարկային (ընթացիկ) հաշվում չկուտակվեն բավարար միջոցներ կարգադրությունը լրիվ վճարելու համար, Պետբանկի բաժանմունքն այդ հաշվում յեղած ամբողջ մնացորդը փոխադրում է կարգադրություն տվող կազմակերպության հատուկ անձնական հաշվին և վերադարձնում է նրան այդ կարգադրությունը։

12) Պետբանկի կողմից վերադարձված կարգա-

դրութեան չմարված գումարի համար (10 և 11-րդ հոդ.) վերադաս կազմակերպությունը կարող է տալ նոր վճարման կարգադրություն (համապատասխանորեն անպարտաճանաչ վճարողի հաշվարկային (ընթացիկ) կամ կուլտֆոնդի հատուկ անձնական հաշվին). այդ կարգադրությունով Պետբանկը կատարում է գանձումը վերև պարզաբանված կարգով։

13) Կուլտֆոնդի հատուկ անձնական հաշիվներով Պետբանկը հաշվում է տոկոսներ հաշվարկային հաշվին վճարվող % % չափով. տոկոսների հաշվումը և վճարումը կատարվում է տարին մեկ անգամ։

14) Սույն հրահանգը ուժի մեջ է ս.|թ. ապրիլի 1-ից

Ցենտրոսոյուզի փոխնախագահ՝ (Նյուտեյն)

Պետբանկի վարչության դիրեկտոր՝ (Մաշկովսկի)

21-ին մարտի 1932 թվ.

Իսկականի հետ ճիշտ է (Վ. Խաչիկյան)



Ձև № 1

ՀԱՅԿՈՈՊ

Ֆին. սեկտոր

№ ..........

« ...... » ........ 193 թ.

Երևան

Պետբանկի և Ցենտրոսոյուզի 1932 թ. 21|III հրահանգի կարգով «Սպառկոոպերացիայի կազմակերպությունների կուլտֆոնդի հատկացումներ կատարելու կարգի մասին»։

Ուղարկվում է պետբանկին (2 օրինակ)

(Այս ինչ կոոպերատ. կազմակերպ. ........ (Հասցեն)

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ (ԸՆԹԱՑԻԿ) ՀԱՇԻՎ № ..........

Պետբանկի .......... Գրասենյակին բաժանմունքին

(Պետբանկի այն բաժանմունքին, որտեղ վճարողը ունի հաշվարկային (ընթացիկ) հաշիվ կամ կուլտֆոնդի հատուկ անձնական հաշիվ)

քաղաք ..........

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՒԲ.

« ...... » ........ 193 թ. փոխանցեք կուլտֆոնդի մեր հատուկ անձնական հաշվին № ..........

Պետբանկի .......... բաժանմունքում .......... ռուբ.

(Գումարը բառերով)

դուրս գրելով այդ գումարը վերև նշված կազմակերպության հաշվարկային (ընթացիկ) հաշվից № ..........

(Ստորագրություն)

| ՊԵՏԲԱՆԿԻ ՆՇՈՒՄՆԵՐԸ. Փոխանցված է՝ |
| --- |
| « ...... » ........ 193 թ. Ռուբ. .......... |
| « ...... » ........ 193 թ. Ռուբ. .......... |
| « ...... » ........ 193 թ. Ռուբ. .......... |
| Ընդամենը Ռուբ. |

Ձև № 2

ՀԱՅԿՈՈՊ
Ցիճ. սեկտոր
№ ..........

Պետբանկի և Ցենտրոսոյուզի 1932 թ. 21/III հրահանգի կարգով «Սպառողական կոոպերացիայի կազմակերպությունների կուլտֆոնդի բանկացումներ կատարելու կարգի մասին»

Ուղարկվում է վճարող կազմակերպության

«......» .................193 թ. Երևան ..................................... (Այս ինչ կոոպերատիվ կազմակերպության) .................... (հասցեն)

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ № ..........

Պետբանկի .................................... Դրամարկղային բաժանմունքին

(միաժամանակ ուղարկվում է Պետբանկի այն բաժանմունքին, որտեղ վճարողը ունի հաշվարկային (ընթացիկ) հաշիվ կամ կուլտֆոնդի հատուկ անձնական հաշիվ)

քաղաք ..........................

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ .................. ՌՈՒԲ.

«......» ....................193 թ. մուծեցեք կուլտֆոնդի մեր հատուկ անձնական № .................. Պետբանկի .................................... Դրամարկղային բաժանմունքում .................. (Գումարը բառերով) ռուբ. համաձայն կուլտֆոնդին կատարվող Ձեր հատկացումների հատուկ հաշվարկի, որը ուղարկված է Ձեզ

(Ստորագրություններ)



(Ձև № 2-ի յերկրորդ յերեսը)

.......................................................
(կարգադրություն դուրս գրող կազմակերպության)

.......................................................
(Հասցեն)

Վերադարձնում ենք Ձեր վճարման կարգադրությունը, վճարողի կողմից չէ վճարված .................................... .................. գումարով։
(Գումարը բառերով)

Մնացած մասի վճարումները փոխանցված են Ձեր կուլտֆոնդի հատուկ անձնական հաշվին գումարով և ժամկետներով համաձայն սույն կարգադրության վրա արված նշումների։

Պետբանկի .................................... Դրամարկղային բաժանմունք

Թիվ. ..........................

743

I
2835